



**Արթուր Ռոբերտի ՊՈՂՈՍՅԱՆ**

*ՀՀ վարչական դատարանի դատավոր,*

*Ռուս-Հայկական (Մլավոնական) պետական համալսարանի ավագ դասախոս,  
իրավաբանական գիտությունների թեկնածու*

**ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՎԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Համաձայն ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 1-ին մասի՝ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա: Տվյալ սահմանադրական նորմից կարելի է եզրահանգել, որ Սահմանադրությամբ Հայաստանի Հանրապետությունում գործում են /պետական իշխանությունն իրականացնում են/ ընդամենն երեք պետական իշխանության թևեր, այն է՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները: Ըստ որում, իշխանության այդ երեք թևերն իրավաբանորեն միմյանցից բաժանված ու հավասարակշռված են, այն է՝ անկախ և հավասար են, այսինքն՝ մեկը մյուսի նկատմամբ չունի առավելություն և չի զբաղեցնում գերիշխող դեր: Ավելին, պետական իշխանության տարանջատման նմանատիպ մոդելներ գործում են աշխարհի երկրների մեծամասնությունում:

Սակայն, մեր կարծիքով, ՀՀ-ում պետական իշխանությունը տարանջատվում է առնվազն չորս թևերի կամ համակարգերի, որոնցից առաջին երեքը կրում են քաղաքական բնույթ /խոսքը գնում է ՀՀ Նախագահի, օրենսդիր և գործադիր իշխանությունների մասին/, իսկ դատական իշխանությունը չի ընդունում քաղաքական որոշումներ և չի փոփոխվում քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության դեպքում: Այսինքն՝ Հայաստանում պետական կառավարումն իրականացվում է չորս համակարգերի միջոցով. բացի երեք իշխանության թևերից, իր իրավազորությունների շրջանակում պետական կառավարում իրականացնում է նաև Հանրապետության Նախագահը, որն Սահմանադրության ուժով ընդգրկված չէ որևէ իշխանության թևում և հանդիսանում է պետության գլուխը: Այս կապակցությամբ կարելի է առանձնացնել իշխանության ևս մի տեսակ, որն իր բնույթով պետական չէ, այլ համայնքային է /խոսքը գնում է տեղական ինքնակառավարման մասին/, թեև ՀՀ համայնքների ղեկավարները «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով հանդիսանում են քաղաքական պաշտոն զբաղեցնող անձինք:

Այս կապակցությամբ հարկ է նշել նաև այն հանգամանքը, որ Սահմանադրության ուժով պետական կառավարման համակարգում իրավաբանորեն անկախ դիրք են զբաղեցնում այնպիսի պետական մարմիններ, ինչպիսիք են ՀՀ կենտրոնական բանկը և վերահսկիչ պալատը, որոնք թեև ձևականորեն ընդգրկված են «Ազգային ժողովը» վերտառությամբ 4-րդ գլխում, սակայն որևէ գործառույթային կապ չունեն օրենսդիր իշխանության հետ /83.3-րդ և 83.4-րդ հոդվածներ/ և որոնց նախագահները ՀՀ Նախագահի առաջարկությամբ միայն նշանակվում են ՀՀ Ազգային ժողովի կողմից:

ՀՀ Սահմանադրության 3-րդ գլխի ուժով ՀՀ պետական իշխանության համակարգում իր ուրույն և կարևորագույն դերն է կատարում Հանրապետության Նախագահը՝ իր կողմից կազմավորված ազգային անվտանգության խորհրդով, ՀՀ Նախագահի գլխավոր ռազմական տեսչությամբ և խորհրդակցական այլ մարմիններով հանդերձ, որն ըստ նույն Սահմանադրության 49-րդ հոդվածի՝ պետության գլուխն է: Մասնավորապես՝ Հանրապետության Նախագահի հիմնական գործառույթներից են հանդիսանում Սահմանադրության պահպանման հետևելը, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեության ապահովելը: Հանրապետության Նախագահը նաև Հայաստանի Հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն է:

Իհարկե, Հանրապետության Նախագահի ինստիտուտի մասին խոսելիս առաջին հերթին ի նկատի ենք ունենում ՀՀ Նախագահին՝ որպես քաղաքական, ընտրովի պաշտոն զբաղեցնող անձ, որն իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ընդունում է քաղաքական որոշումներ և համակարգում դրանց կատարումը /«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի «ժգ» կետ, 2-րդ մաս/: Սակայն իրավագետների շրջանում տարածված է այն կարծիքը, որ Հանրապետության Նախագահն առաջին հերթին իրենից ներկայացնում է հենց իշխանական իրավազորություններով օժտված «պետական մարմին»: Մենք հակված ենք այն կարծիքին, որ Հանրապետության Նախագահն առաջին հերթին իրենից ներկայացնում է իշխանական իրավազորություններով օժտված քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ /ժողովրդի ուղղակի մանդատ ունեցող պաշտոնատար անձ/, որը միաժամանակ հանդիսանում է նաև պետական կառավարման առանձին ինստիտուտ՝ իրեն անմիջականորեն ենթակա կառույցներով /խորհրդակցական մարմիններով/:

*Ավելին, մեր կարծիքով, Հանրապետության Նախագահը, որպես պետական կառավարման ինստիտուտ, Սահմանադրության 3-րդ գլխով իրեն վերապահված բացառիկ գործառույթների և լիազորությունների ուժով գտնվում է պետական իշխանության հիերարխիայի /բուրգի/ գագաթում, որին իր իրավազորություններով հավասար որևէ մարմին կամ պաշտոնատար անձ առկա չէ: Այսինքն՝ ՀՀ Նախագահն օժտված է այնպիսի բացառիկ լիազորություններով, որոնցով պարտավոր է ապահովել պետական մյուս երեք իշխանությունների բնականոն գործունեությունը:*

Իսկ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների հավասարության մասին խոսելիս նույնպես անհրաժեշտ է կատարել որոշակի վերապահումներ:

Այսպես, Սահմանադրության 62-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը: Այսինքն՝ ՀՀ Ազգային ժողովի գլխավոր գործառույթը կայանում է համապարտադիր բնույթ կրող օրենքների ընդունման մեջ, որոնք իրավական համակարգում իրենց իրավաբանական ուժով զբաղեցնում են «երրորդ տեղը»՝ Սահմանադրությունից և ՀՀ միջազգային պայմանագրերից հետո /ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդված/: Ըստ որում, օրենքների կատարումը պարտադիր է նաև ինչպես Հանրապետության Նախագահի, այնպես էլ ՀՀ Ազգային ժողովի, կառավարության և դատարանների համար:

Այս կապակցությամբ Հանրապետության Նախագահին է վերապահված Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքների ստորագրման և հրապարակման բացառիկ իրավազորությունը, որն իրականացնելիս ՀՀ Նախագահը կարող է օրենքն ստանալուց հետո քսանմեկօրյա ժամկետում առարկություններով, առաջարկություններով վերադարձնել Ազգային ժողով՝ պահանջելով նոր քննարկում /Սահմ. 55-րդ հոդվածի 2-րդ կետ/: *Այդ կարևոր լիազորությամբ Հանրապետության Նախագահն ապահովում է օրենսդիր իշխանության բնականոն գործունեությունը՝ արտահայտելով իր քաղաքական, իրավական դիրքորոշումն արդեն իսկ ընդունված օրենքների վերաբերյալ: Բացի այդ, հենց Հանրապետության Նախագահն է օժտված որոշակի դեպքերում Ազգային ժողովն արձակելու իրավազորությամբ /Սահմ. 74.1-րդ հոդված/:*

Ուշագրավ են նաև ՀՀ Ազգային ժողովի այն գործառույթները, որոնք կապված են կառավարության ձևավորման և գործունեության հետ: Այսպես, Հանրապետության Նախագահի կողմից վարչապետ է նշանակվում պատգամավորների մեծամասնության /եթե դա հնարավոր չէ, ապա առավել քվով պատգամավորների/ վստահությունը վայելող անձը: Ազգային ժողովում պատգամավորական տեղերի բաշխման և պատգամավորական խմբակցությունների հիման վրա /Սահմ. 55-րդ հոդվածի 4-րդ կետ/: Ի դեպ, հատկանշական է այն փաստը, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքն ընդհանրապես չի կանոնակարգում այնպիսի առանցքային հարցեր, ինչպիսիք են Ազգային ժողովում պատգամավորական տեղերի բաշխման և պատգամավորական խմբակցությունների հիման վրա պատգամավորների վստահության արտահայտումն առաջադրված անձին, որին ՀՀ Նախագահը կարող է նշանակել վարչապետ, ինչպես նաև վարչապետի թեկնածուին Ազգային ժողովին առաջարկելը և Հանրապետության Նախագահի կողմից պատգամավորների վստահությունը վայելող անձին վարչապետ չնշանակելը: Ըստ որում, Հանրապետության Նախագահը կաշկանդված է Սահմանադրության 55-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված ժամկետով, ըստ որի վարչապետը նշանակվում է կառավարության հրաժարականի ընդունումից հետո՝ տասնօրյա ժամկետում: Այսինքն՝ առանց ՀՀ Ազգային ժողովի վստահության որևէ անձ չի կարող նշանակվել ՀՀ գործադիր իշխանության ղեկավար՝ վարչապետ:

Բացի այդ, Ազգային ժողովի կողմից արդեն իսկ ձևավորված կառավարության վրա ներազդելու /քաղաքական դիրքորոշում արտահայտելու/ հզոր մեխանիզմներից է նաև վերջինիս ներկայացրած ծրագրին հավանություն տալը: Ի դեպ, Սահմանադրության 74.1-րդ հոդվածի ուժով Հանրապետության Նախագահն արձակում է Ազգային ժողովը, եթե նա երկու անգամ անընդմեջ երկու անսվա ընթացքում հավանություն չի տալիս կառավարության ծրագրին: Ավելին, Ազգային ժողովի կողմից ներազդելու մեխանիզմներից է նաև կառավարությանն անվստահություն հայտնելը /Սահմ. 84-րդ հոդված/, կառավարության ներկայացրած պետական բյուջեի հաստատումը /Սահմ. 76-րդ հոդված/ և վերահսկիչ պալատի եզրակացության առկայությամբ պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության քննարկումը և հաստատումը /Սահմ. 77-րդ հոդվ./: Ի դեպ, Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ:

Ի վերջո, Ազգային ժողովը պարզապես կարող է չընդունել կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնությամբ ներկայացված օրենքի նախագիծը՝ դրանով իսկ արտահայտելով իր քաղաքական մոտեցումը ՀՀ կառավարության կողմից որդեգրված որոշակի քաղաքականությանը և ստիպելով վերջինիս վերանայել այն:

Մեր կարծիքով, կառավարության հետ կապված Ազգային ժողովի մշտապես «հսկողական» դերի մասին է խոսում նաև պատգամավորների իրավունքը գրավոր և բանավոր հարցերով, իսկ խմբակցությունները և պատգամավորական խմբերը նաև գրավոր հարցապնդումներով կառավարությանը դիմելու իրավունքը, որին նվիրված է Սահմանադրության 80-րդ հոդվածը և «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 105-րդ և 105.1-րդ հոդվածները:

Ի վերջո, ՀՀ Ազգային ժողովի կողմից են ընդունվում երկրի պետական քաղաքականության հիմնական ուղղությունները կանոնակարգող օրենքները, իսկ ՀՀ կառավարությունը և վարչապետն իրավազոր են ընդունել միայն որոշումներ, որոնք իրենց բնույթով ենթաօրենսդրական ակտեր են և չպետք է հակասեն ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին /«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-15-րդ հոդվածներ/. այսինքն՝ յուրաքանչյուր որոշում ընդունելիս գործադիր իշխանությունը պետք է քննության առնի ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխանության հարցը:

*Այսպիսով, կարելի է խոսել Ազգային ժողովի և կառավարության միջև փոխհարաբերություններում ակնհայտորեն առաջինի իրավաբանորեն «հսկողական» դերի և գործառույթների մասին:*

Ի դեպ, մեզ համար անհասկանալի է Սահմանադրության կառուցվածքի տրամաբանությունն այն առումով, որ ՀՀ կենտրոնական բանկին վերաբերող նորմերն ընդգրկվել են «Ազգային ժողովը» վերտառությամբ 4-րդ գլխում՝ որևէ գործառույթային կապ չունենալով օրենսդիր իշխանության հետ, քանի որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հիմնական խնդիրը Հայաստանի Հանրապետությունում գների կայունությունն ապահովելն է: Բացի այդ, կենտրոնական բանկը Սահմանադրությամբ և օրենքով իրեն վերապահված խնդիրները և գործառույթներն իրականացնելիս անկախ է /ՀՀ Սահմ. 83.3-րդ հոդվ./: Նույնը կարելի է ասել նաև ՀՀ վերահսկիչ պալատի մասին, որի հիմնական գործառույթն է բյուջետային միջոցների և պետական ու համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողությունը /ՀՀ Սահմ. 83.4-րդ հոդվ./: Իհարկե, ՀՀ վերահսկիչ պալատի դեպքում կարելի է կատարել որոշակի վերապահում այն առումով, որ Ազգային ժողովը քննարկում և հաստատում է պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը՝ միայն վերահսկիչ պալատի եզրակացության առկայությամբ /Սահմ. 77-րդ հոդվ./, *այսինքն՝ անկախ վերահսկիչ պալատի աշխատանքի կարևոր արդյունքներից մեկը կարող է դառնալ նաև պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության Ազգային ժողովի կողմից չհաստատվելը:*

ՀՀ Սահմանադրության նորմերի և հատկապես 5-րդ գլխի իմաստով ՀՀ-ում գործադիր իշխանությունն իրականացվում է կառավարության կողմից, որը կազմված է վարչապետից և նախարարներից: Կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը վարչապետի ներկայացմամբ սահմանվում է Հանրապետության Նախագահի հրամանագրով /հոդված 85/: *Այստեղ, հավանաբար, Սահմանադրությունն ի նկատի ունի վարչապետին և նախարարներին անմիջականորեն ենթակա պետական կառավարման մարմինները՝ առաջին հերթին, նախարարությունները, որոնց գործունեության կազմակերպման կարգը պետք է սահմանվի ՀՀ Նախագահի հրամանագրով, իսկ կառավարության կառուցվածքը կառավարության առաջարկությամբ սահմանվում է օրենքով: Այսինքն՝ նախարարությունների կազմը և նպատակաուղղվածությունը պետք է համապատասխանի օրենքով սահմանված նախարարների թվակազմին և նրանց վերապահված բնագավառներին՝ կառավարության կառուցվածքին, որը պետք է լինի սպառիչ և ընդգրկի գործադիր իշխանության գործունեության բոլոր ոլորտները:* Ի դեպ, նույն Սահմանադրության 88.1-րդ հոդվածը նվիրված է մարզպետների նշանակման կարգին և ընդհանուր լիազորություններին, որոնք նույնպես ընդգրկված են գործադիր իշխանության կազմում:

Իր հերթին, նույն Սահմանադրության 2-րդ հոդվածը, որպես հիմնարար սկզբունք, հռչակում է, որ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է:

*Այսինքն՝ սահմանադրական վերը նշված նորմի ուժով ժողովրդի իշխանությունը կարող են իրականացնել /իշխանական իրավագործություններով կարող են օժտված լինել/ բացառապես Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ու պաշտոնատար անձինք: Ստացվում է, որ այն մարմինները կամ պաշտոնատար անձինք, որոնք կոնկրետ նախատեսված չեն Սահմանադրությամբ, չեն կարող օժտված լինել իշխանական իրավագործություններով և իրականացնել պետական կառավարում. խոսքն առաջին հերթին վերաբերում է*

կառավարությանն առընթեր ստեղծված տարբեր խորհուրդներին, հանձնաժողովներին, կոմիտեներին, ծառայություններին և այլ մարմիններին, որոնք իրենց գործառույթներով, իհարկե, ներառված են գործադիր իշխանության համակարգում, սակայն նախատեսված չեն Սահմանադրությամբ, իսկ նրանց ղեկավարները չեն հանդիսանում կառավարության անդամներ, ուստի այդ մարմինների գործունեության օրինակարգության հարցը վիճելի է: Տվյալ հիմնահարցի վերջնական և սպառիչ պատասխանը կարող է տրվել ՀՀ սահմանադրական դատարանի համապատասխան որոշմամբ, քանի որ, մեր կարծիքով, նույն Սահմանադրության 2-րդ և 85-րդ հոդվածների միջև առկա է տրամաբանական հակասություն: Իսկ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի՝ նույն իրավական ակտի ընդհանուր և հատուկ մասերի միջև հակասության դեպքում գործում են ընդհանուր մասի դրույթները: Այսպես, Սահմանադրության 2-րդ հոդվածը ընդգրկված է «Սահմանադրական կարգի հիմունքները» վերտառությամբ 1-ին գլխում, որն իրենից ներկայացում է ընդհանուր մաս, իսկ 85-րդ հոդվածը՝ «Կառավարությունը» վերտառությամբ 5-րդ գլխում, որն իրենից ներկայացնում է հատուկ մաս:

Բացի այդ, գործադիր իշխանության տարբեր մարմիններն ընդունում են այնպիսի նորմատիվ իրավական ակտեր /օրինակ՝ ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատված սանիտարական նորմեր և կանոններ, ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության պետի հրամանով հաստատված հրդեհային անվտանգության կանոններ/, որոնք պարունակում են ֆիզիկական և իրավաբանական անձանց համար նախատեսված պարտականություններ, նրանց իրավունքների և ազատությունների սահմանափակումներ, ինչը ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի ուժով օրենքի կարգավորման բացառիկ ոլորտն է:

**Արդարադատությունը** պետական գործունեության ձև է, որը կայանում է դատարանի կողմից քրեական հանցագործությունների, քաղաքացիական վեճերի և այլնի մասին իրեն ենթակա գործերի քննության և ըստ էության լուծման մեջ<sup>1</sup>:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Ըստ նույն Սահմանադրության 97-րդ հոդվածի՝ արդարադատություն իրականացնելիս դատավորը և սահմանադրական դատարանի անդամն անկախ են, ենթարկվում են միայն Սահմանադրությանը և օրենքին: Այսինքն՝ դատավորն արդարադատություն իրականացնելիս պետք է ղեկավարվի և կիրառի բացառապես ՀՀ Սահմանադրության և օրենքների նորմերը: Ստացվում է, որ դատարանը չի կարող ղեկավարվել և կիրառել ենթաօրենսդրական ակտեր, այդ թվում՝ ՀՀ կառավարության և վարչապետի նորմատիվ բնույթ կրող որոշումներ:

Փաստորեն, վերը նշված սահմանադրական նորմերի ուժով դատարաններն իրականացնում են իրենց գլխավոր գործառույթը՝ արդարադատությունը, անկախ ՀՀ գործադիր իշխանության մարմինների ընդունած նորմատիվ իրավական ակտերի պահանջներից, որով ապահովվում է դատական իշխանության անկախությունը գործադիր իշխանությունից:

Ի դեպ, ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի իրավանորմերը չեն բխում Սահմանադրության 5-րդ հոդվածով հռչակված օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքից և թույլ են տալիս գործադիր իշխանության ներկայացուցչին՝ ՀՀ արդարադատության նախարարին, կարգապահական վարույթ հարուցել դատական իշխանության ներկայացուցչի՝ դատավորի նկատմամբ:

Բացի այդ, դատարանը, իրականացնելով արդարադատություն, կատարում է նաև յուրահատուկ «հանրային կյանքի կարգավորիչի» դեր և համապատասխան վեճի

<sup>1</sup> Ст'н Юридический энциклопедический словарь. 2-ое дополненное издание, гл. ред. А.Я. Сухарев. Москва, "Советская энциклопедия", 1987, т.2 360:

վերաբերյալ գործի քննության և ըստ էության լուծման ժամանակ հանդես է գալիս «արբիտրի» դերում՝ առաջնորդվելով բացառապես ՀՀ Սահմանադրության և օրենքների պահանջներով: Դա բխում է նաև ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից, որի ուժով յուրաքանչյուր ոք օժտված է իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքով: Ըստ որում, դատարանը, իրականացնելով արդարադատություն, իրավասու չէ տալ քաղաքական գնահատականներ, առավել ևս՝ ընդունել քաղաքական որոշումներ:

Դրանով իսկ դատական իշխանությունը, կոնկրետ գործի շրջանակներում ըստ էության լուծելիս վեճը, անդրադառնում է դատավարության կողմերի դիրքորոշումների հիմնավորվածությանը և իրավաչափությանը՝ արդյունքում նպաստելով նաև Հանրապետության Նախագահի հիմնական գործառնությունների իրականացմանը. հետևել Սահմանադրության պահպանմանը, ապահովել օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը /ՀՀ Սահմ. 49-րդ հոդված/: Ավելին, Հանրապետության Նախագահը չի կարող ՀՀ օրենսդրության պահանջների խախտման յուրաքանչյուր դեպքում անդրադառնալ այդ հարցին՝ հետևելով Սահմանադրության պահպանմանը: Դրա համար գործում է դատական իշխանությունը, որն իրավագոր է նաև քննության առնել տարբեր իշխանության թևերի, միևնույն իշխանության թևի ներսում, իշխանության որևէ թևի հետ ծագած վեճը և ըստ էության լուծում տալ դրան: Ի վերջո, հենց դատական իշխանությունն է յուրաքանչյուր գործի քննության արդյունքում «վերջակետ դնում» վեճին:

*Այս կապակցությամբ պետության համար գերխնդիր է ՀՀ դատական իշխանության անկախության լիարժեք ապահովումը, որի շնորհիվ պետական իշխանության այս թևը կարող է բնականոն ձևով իրականացնել «հանրային կյանքի կարգավորիչի» իր դերը: Այս հիմնախնդրի լուծմանը մեծապես կնպաստի դատավորների սոցիալ-տնտեսական ապահովումը:*

Ուշագրավ է նաև ՀՀ սահմանադրական դատարանի իրավագործությունը որոշելու օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը /ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ/: Փաստորեն, ՀՀ դատական իշխանության մաս կազմող ՀՀ սահմանադրական դատարանը, իրականացնելով սահմանադրական վերահսկողություն և արդարադատություն, օժտված է ՀՀ օրենքների, ՀՀ Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի և այլ որոշումների համապատասխան դրույթների ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու իրավագործությամբ: Դրանով իսկ նույն Ազգային ժողովի ընդունած օրենքը, ՀՀ Նախագահի հրամանագիրը և կառավարության, վարչապետի որոշումը որոշակի մասով կամ ամբողջությամբ կարող է անվավեր ճանաչվել և չգործել: Ավելին, ո՛չ օրենսդիր և ո՛չ էլ գործադիր իշխանության մարմինները չպետք է օժտված լինեն դատական իշխանության վրա ներազդելու որևէ իրավագործությամբ /ՀՀ Սահմանադրության 97-րդ հոդվածի ուժով դատավորը կամ սահմանադրական դատարանի անդամն անկախ են/, ինչը չի կարելի ասել դատական իշխանության մասին, որի մաս կազմող վարչական դատարանն իրավասու է քննության առնել և ըստ էության լուծում տալ նաև նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ գործերին /ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ գլուխ/: Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասի ուժով նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին վարչական դատարանի որոշումները պաշտոնական հրապարակման պահից Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում պարտադիր են բոլորի համար:

Անհասկանալի է նաև ՀՀ գործող Սահմանադրության հեղինակների տրամաբանությունը՝ կապված ՀՀ դատախազությանը վերաբերող նորմերը «Դատական իշխանությունը» վերտառությամբ 6-րդ գլխում ընդգրկելու հետ: ՀՀ Սահմանադրության 103-րդ

հողվածի իմաստով դատարանում դատախազության մասնակցությունն ենթադրում է երկու հիմնական ձև՝ քրեական գործով մեղադրանքի պաշտպանություն և պետական շահերի պաշտպանության հայցի հարուցում: Փաստորեն, թե՛ քրեական, թե՛ վարչական գործերով դատախազությունն ունի կողմի կարգավիճակ՝ հակառակորդ կողմի հետ հավասարության սկզբունքով: Դատախազությունը չի կարող համարվել դատական իշխանության մաս<sup>2</sup> և այս իմաստով այն կարող է հանդիսանալ կամ գործադիր իշխանության մաս, կամ այնպիսի մարմին, որն ընդգրկված չէ իշխանության որևէ թևի համակարգում և զբաղեցնում է անկախ դիրք: Մենք հակված ենք երկրորդ տարբերակին, քանի որ դատախազությունը, հանդիսանալով միասնական համակարգ, պետք է ունենա անկախ մարմնի կարգավիճակ /այնպես, ինչպես ՀՀ կենտրոնական բանկը և վերահսկիչ պալատը/, ինչը հնարավորություն կընձեռնի իրեն լիարժեքորեն իրականացնել իր սահմանադրական իրավագործությունները:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունում գործող իշխանության թևերի հավասարության և անկախության մասին խոսելիս անհրաժեշտ է կատարել որոշակի վերապահումներ, քանի որ այն առավել հաճախ կրում է հռչակագրային, այլ ոչ թե պրակտիկ բնույթ:

Ի վերջո, սույն հողվածում արտահայտած տեսակետը կարող է չհամապատասխանել պետության և իրավունքի տեսությունում կամ սահմանադրական իրավունքում առկա մոտեցումներին, ինչպես նաև իրավագետների մոտ ձևավորված դիրքորոշումներին, քանի որ սույն հողվածով փորձ է կատարվում վերլուծել գործող զսպումների և հակակշիռների մեխանիզմների իրական, հնարավոր դրսևորումները:

---

<sup>2</sup> Ի դեպ, բազմաթիվ դատախազների աշխատասենյակներում և նույնիսկ ՀՀ գլխավոր դատախազության միջանցքում կարելի է ականատես լինել «Ֆեմիդայի» արձանների տեղադրմանը, որն արդարադատության խորհրդանիշն է: